

Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թի 181

Թէւ Աստուծոյ Հոգին սրբագործութեան գերբնական ու անմիջական աղբիւրն է, սակայն Նա աշխատում է շնորհքի միջոցներով որպէսզի յառաջ բերի մեր սրբութեան մէջ եղած աճումը: Բարձր առմամբ սրբագործութեան միջոցները կարելի են դասակարգել որպէս սրբագործութեան ներքին ու արտաքին միջոցները:

Սրբագործութեան ներքին միջոցները – Ճիշտ ինչպէս որ հաւատքը արդարացման գործիքային միջոցն է, այնպէս էլ հաւատքը սրբագործութեան գործիքային ու ներքին միջոցն է: Ճիշտ ինչպէս որ հաւատքը ընկալում է Քրիստոսին ու Նրա ուղղարարութիւնը արդարացման համար, այնպէս էլ հաւատացեալի հաւատքի գործադրումը անհրաժեշտ է նրա յառաջադիմական սրբագործութեան մէջ (Գործք Առաքելոց 14:22, Հռովմայեցի 11:20, Բ. Կորնթացի 5:7, Գաղատացի 2:20, Կողոսացի 1:23, Ա. Տիմոթէոս 1:18-19, 6:11-12, Ա. Պետրոս 1:5, 5:9): Թէպէտ վերածնունդն ու արդարացումը կատարեալ, լրի ու հաւասար են բոլոր Քրիստոնեաներուն, սրբագործութիւնը հաւասար չի, եւ տարբերում է հաւատացեալների կեանքերումը (Եբրայեցի 5:12-14):

Սրբագործութեան արտաքին միջոցները – Սուրբ Հոգին գործածում է մի շարք արտաքին շնորհքի միջոցներ որպէսզի յառաջացնի հաւատացեալների կեանքում եղած սրբութեան աճը: Սրբագործութեան գլխաւոր միջոցը որը Հոգին գործածում է որպէսզի աստիճանաբար սրբացնէ հաւատացեալներին Աստուծոյ Խօսքն է: Հաւատացեալները կոչւած են կանոնաւորաբար մասնակցել Աստուծոյ Խօսքի անձնական եւ ընտանեկան ուսումնասիրութեան ու մտախոհութեան, ինչպէս նաեւ դրա լողութեանը մինչ այդ քարոզում եւ ուսուցանում է հաւաքական պաշտամունքի ընթացքում (Յեսու 1:8, Մաղնոս 1:1-3, Մատթէոս 4:4, Յովհաննէս 17:17, Ա. Պետրոս 2:1-3):

Քրիստոսից կարգադրւած եկեղեցու խորհուրդները՝ այսինքն մկրտութիւնն ու հաղորդութիւնը, նաեւ շնորհքի միջոցներ են, որը Հոգին գործածում է որպէսզի նշանակել, կնքել ու յարմարացնէ Քրիստոսի գործի առաւելութիւնները հաւատացեալներին: Սրանք յաճախ կոչւում են որպէս «տեսանելի Խօսք», որոնք շօշափելիօրէն հաղորդում են գրաւոր Խօսքում արտայայտուած ճշմարտութիւնները: Սրանք ենթակայ են Աստուծոյ Խօսքին եւ պիտի միշտ ուղեկցեն (գուզընթաց լինեն) դրանով (Մատթէոս 28:19, Հռովմայեցի 4:11-12, Ա. Կորնթացի 11:23-26, Կողոսացի 2:11-12, Ա. Պետրոս 3:21):

Կան նաեւ ուրիշ շնորհքի միջոցներ որը Սուրբ Հոգին գործածում է հաւատացեալների զարգացման եւ աճման մէջ, եւ որոնց հաւատացեալները կոչւած են հաւատարմօրէն մասնակցելու՝ ինչպէս հաւաքական պաշտամունքին (Եփեսացի 5:18-20, Եբրայեցի 10:24-25), անձնական ու հաւաքական աղօթքին (Եփեսացի 6:18, Փիլիպպեցի 4:6-7, Ա. Յովհաննէս 5:14-15), հաւատացեալների հետ հաղորդակցութեան (Գործք Առաքելոց 2:42, Ա. Թեսաղոնիկեցի 5:11, Ա. Յովհաննէս 1:7), ուրիշներին ծառայելու հոգեւոր պարգէների օգտագործութեան (Ա. Կորնթացի 12:7, Եփեսացի 4:11-13, Ա. Պետրոս 4:10), ուրիշներին վկայութեան (Մատթէոս 28:19-20), ու նաեւ Աստուծոյ խրատանքի եւ նախախնամական առաջնորդութեան (Յովհաննէս 15:2, Հռովմայեցի 5:3-4; Եբրայեցի 12:10-11): Ուստի պարզ է որ սրբութեան մէջ աճումը պարունակում է մեծ աշխատանք՝ պահանջելով շնորհքի միջոցների լուրջ ու գործունէայ գործածումը:

Համակատար գործ – Թէպէտ Վերակազմ աստուածաբանութիւնը ուսուցանում է որ վերածնութիւնն ու արդարացումը մենակատար են բնութեամբ, ուր միայն Աստուած է գործում մեր մէջ. սակայն, այն նաեւ հաստատում է որ սրբագործութիւնը համակատար է բնութեամբ, ուր Աստուած գործում է մեր մէջ եւ մենք նաեւ գործում ենք: Մեր սրբութեան մէջ եղած աճը մի գործակցական ընթացք է: Շատ հատուածներ կան Աստուածաշնչում որոնք ուսուցանում են սրբագործութեան համակատար բնոյթը (Հռովմայեցի 8:12-14, Ա. Կորնթացի 15:10, Կողոսացի 1:29, Եբրայեցի 13:20-21): Փիլիպպեցի 2:12-13ը մի դասական հատուած է համակատար սրբագործութեան առթիւ, ուր մէկ ձեռքում այն ուսուցանում է որ միայն Աստուած չի որը գործում է, անելով ամեն ինչ մեր փոխարէն մեր սրբագործութեան համար (Աստուածա-յենուած կրաւորականութիւն). եւ միւս ձեռքում ուսուցանում է որ միայն մարդը չի որը գործում է, թողնելով մեր փրկութիւնը մեր ջանքերին ու ուժերին (ինքնա-յենուած գործունէութիւն): Փոխարէն, այս հատուածը հաստատում է որ մեր սրբութեան աճումը մի միացեալ ձեռնարկութիւն է՝ ուր մինչ մենք պատիրուած ենք գործելու, մենք նաեւ պիտի վստահենք որ Աստուած մեզ հետ է եւ ներգործում է մեզանում, որը կկատարի Իր նպատակները մեր մէջ (Ա. Կորնթացի 15:58, Փիլիպպեցի 1:6):

Եզրափակելով, որպէսզի սրբագործութեան համակատար բնոյթը սխալ չհասկանանք, պէտք է նշել մի կարեւոր կէտ այստեղ, թէ ասելով որ Աստուած եւ մարդ համագործակցում են այս գործընթացում մենք չենք ասում որ Աստուած ու մարդ անում են նոյն բանը եւ նոյն կերպով. ոչ էլ ասում ենք որ Աստուած անում է Իր բաժինը եւ մենք անում ենք մեր բաժինը, եւ ապա աճում է տեղի ունենում: Այլ թէ, սրբագործութեան մէջ Աստուծոյ գործը առաջնակարգ է, մինչ մերը երկրորդական. Նրանը հիմնական է, իսկ մերը հետեւական (յաջորդական): Մենք գործում ենք, որովհետեւ Աստուած ներգործում է մեզանում: Մեր գործը՝ թէ կամենալը եւ թէ կատարելը, մեր մէջ եղած Աստուծոյ շարունակական գործից է կախեալ եւ բխում: